

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 4

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի 2018թ. դեկտեմբերի 28-ի նիստի

Խորհրդի 42 անդամներից ներկա էին 37-ը: Նախագահում էր խորհրդի նախագահ դեկան, պրոֆ. Գ.Ղազինյանը, քարտուղարում՝ խորհրդի քարտուղար Տ.Սուջանը: Քվորումը ստուգելուց հետո խորհրդի նախագահը քվեարկության դրեց օրակարգը, որը միաձայն հաստատելուց հետո խորհուրդն անցավ օրակարգային հարցերի քննարկմանը (օրակարգը կցվում է):

ՕՐԱԿԱՐԳ

1. Գիտական հաղորդում (զեկ.՝ Քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի ասիստենտ Ա.Հովհաննիսյան):

2. Քաղաքացիական դատավարության ամբիոնի հաշվետվությունը ուսումնական և գիտահետազոտական գործունեության մասին (զեկ.՝ ամբիոնի վարիչ, պրոֆ. Վ.Հովհաննիսյան):

3. ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ՈՒԳԸ նոր նախագահի ներկայացում. ՈՒԳԸ՝ 2018-2019 ուսումնական տարվա 1-ին կիսամյակային հաշվետվությունը:

4. Ընթացիկ հարցեր:

1. ԼՍԵՑԻՆ. Գիտական հաղորդում (զեկ.՝ Քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի ասիստենտ Ա.Հովհաննիսյան):

Քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի ասիստենտ Ա.Հովհաննիսյանը հանդես եկավ դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու ինստիտուտի վերաբերյալ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Վ.Հովհաննիսյանը, պրոֆ. Տ.Բարսեղյանը, պրոֆ. Վ.Ստեփանյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաղորդումն ընդունել ի գիտություն (հաղորդումը կցվում է):

2. ԼՍԵՑԻՆ. Քաղաքացիական դատավարության ամբիոնի հաշվետվությունը ուսումնական և գիտահետազոտական գործունեության մասին (զեկ.՝ ամբիոնի վարիչ, պրոֆ. Վ.Հովհաննիսյան):

Պրոֆ. Վ.Հովհաննիսյանն ամփոփ տեղեկություններ ներկայացրեց հաշվետու շամանակահատվածում ամբիոնի ուսումնական և գիտահետազոտական գործունեության մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Գ.Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաշվետվությունը գնահատել դրական (հաշվետվությունը կցվում է):

3. ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ՈՒԳԸ նոր նախագահի ներկայացում. ՈՒԳԸ՝ 2018-2019 ուսումնական տարվա 1-ին կիսամյակային հաշվետվությունը:

Պրոֆ. Գ.Ղազինյանը ներկայացրեց ՈԻԳԸ նոր նախագահ Լեյլի Թադևոսյանին: ՈւԳԸ նոր նախագահին ամփոփ տեղեկություններ ներկայացրեց 2018-2019 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի գործունեության մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Գ.Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաշտվետվությունը գնահատել դրական (հաշվետվությունը կցվում է):

4. Ընթացիկ հարցեր

4.1 ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի Քաղաքացիական իրավունքի ամբիոնի միջնորդությունը՝ ամբիոնի հայցորդ Ջարինե Ազիզյանի ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Դեկան պրոֆ. Գ.Ղազինյանը, պրոֆ. Վ.Ավետիսյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Ա. Հաստատել Քաղաքացիական իրավունքի ամբիոնի հայցորդ Ջարինե Ազիզյանի՝ «Գրավի ինստիտուտը քաղաքացիական օրենսդրությունում. առկա խնդիրները և բարեփոխման հեռանկարները» վերտառությամբ թեկնածուական ատենախոսության թեման, բնագավառը՝ իրավաբանական գիտություններ, մասնագիտությունը՝ ԺԲ.00.03 - «Մասնավոր իրավունք»:

Բ. Գիտական ղեկավար հաստատել ի.գ.դ., պրոֆեսոր Ա.Հայկյանցին:

Գ. Միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու Իրավագիտության ֆակուլտետի խորհրդի սույն որոշումը:

4.2 ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի Քրեական իրավունքի ամբիոնի միջնորդությունը՝ ամբիոնի հեռակա ուսուցմամբ ասպիրանտ Արփինե Սարգսյանի թեկնածուական ատենախոսության թեմայի և ղեկավարի հաստատման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Դեկան, պրոֆ. Գ.Ղազինյանը, պրոֆ. Ա.Գաբուզյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Ա. Հաստատել Քրեական իրավունքի ամբիոնի հեռակա ուսուցմամբ ասպիրանտ Արփինե Սարգսյանի՝ «Դատական վերահսկողությունը ազատությունից զրկելու հետ կապված պատիժների կատարման նկատմամբ» վերտառությամբ թեկնածուական ատենախոսության թեման, բնագավառը՝ իրավաբանական գիտություններ, մասնագիտությունը՝ ԺԲ.00.05 - «Քրեական իրավունք և կրիմինալոգիա, քրեակատարողական իրավունք»:

Բ. Գիտական ղեկավար հաստատել ի.գ.դ., պրոֆեսոր Հ.Խաչիկյանին:

Գ. Միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու Իրավագիտության ֆակուլտետի խորհրդի սույն որոշումը:

4.3 ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի Քրեական իրավունքի ամբիոնի միջնորդությունը՝ ՀՀ ոստիկանության կրթահամալիրի հեռակա ուսուցմամբ ասպիրանտ Էլյա Կարապետյանի թեկնածուական ատենախոսության թեմայի և ղեկավարի հաստատման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Դեկան, պրոֆ. Գ.Ղազինյանը, պրոֆ. Ա.Գաբուզյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Ա. Հաստատել ՀՀ ոստիկանության կրթահամալիրի հեռակա ուսուցմամբ ասպիրանտ Էլյա Կարապետյանի՝ «Երեխաների շահերի դեմ ուղղված հանցագործությունների կանխարգելումը» վերտառությամբ թեկնածուական ատենախոսության թեման, բնագավառը՝ իրավաբանական գիտություններ, մասնագիտությունը՝ ԺԲ.00.05 - «Քրեական իրավունք և կրիմինալոգիա, քրեակատարողական իրավունք»:

Բ. Գիտական ղեկավար հաստատել ի.գ.դ., դոցենտ Ա.Մարգարյանին:

4.4 ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի մեթոդական խորհրդի միջնորդությունը՝ Պետության և իրավունքի տեսության և պատմության ամբիոնի ասիստենտ Վ.Գևորգյանի՝ «Համեմատական իրավագիտություն» վերտառությամբ ուսումնական ձեռնարկը տպագրության երաշխավորելու վերաբերյալ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Դեկան պրոֆ. Գ.Ղազինյանը, դոց. Ա.Մարգարյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաշվի առնելով ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի մեթոդական խորհրդի դրական եզրակացությունը՝ «Համեմատական իրավագիտություն» վերտառությամբ ձեռնարկը երաշխավորել տպագրության:

4.5 ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի մեթոդական խորհրդի միջնորդությունը՝ Պետության և իրավունքի տեսության և պատմության ամբիոնի պրոֆեսոր Ա.Վաղարշյանի՝ «Հանդուրժողականություն» վերտառությամբ ուսումնական ձեռնարկը տպագրության երաշխավորելու վերաբերյալ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Դեկան պրոֆ. Գ.Ղազինյանը, դոց. Ա.Մարգարյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաշվի առնելով ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի մեթոդական խորհրդի դրական եզրակացությունը՝ «Հանդուրժողականություն» վերտառությամբ ձեռնարկը երաշխավորել տպագրության:

4.6 ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի մեթոդական խորհրդի միջնորդությունը՝ Քաղաքացիական իրավունքի ամբիոնի դոցենտ Գ.Բեքմեզյանի՝ «Գույքի վարձակալության և այն անհատույց օգտագործման հանձնելու պայմանագրեր» վերտառությամբ ուսումնական ձեռնարկը տպագրության երաշխավորելու վերաբերյալ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Դեկան պրոֆ. Գ.Ղազինյանը, դոց. Ա.Մարգարյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաշվի առնելով ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի մեթոդական խորհրդի դրական եզրակացությունը՝ «Գույքի վարձակալության և այն անհատույց օգտագործման հանձնելու պայմանագրեր» վերտառությամբ ձեռնարկը երաշխավորել տպագրության:

Խորհրդի նախագահ

Գ. Ղազինյան

Խորհրդի քարտուղար

Տ.Սուջյան

Գիտական հաղորդում

Գիտական հաղորդման առանցքում ընկած են հետևյալ երեք հիմնահարցերը՝ 1) նյութական կամ դատավարական նորմի ակնհայտ և կոպիտ խախտման հիմքով Բարձրագույն դատական խորհրդի կողմից դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելը, 2) Բարձրագույն դատական խորհրդի այդպիսի որոշումը որպես նոր հանգամանք դիտարկելը օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի վերանայման համար ՀՀ քրեական դատավարությունում, 3) Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճռի հիման վրա դատավորին նյութական պատասխանատվության ենթարկելը (Վենետիկի հանձնաժողովի դիրքորոշումները):

Մինչ այդ հարցերում առկա խնդիրների քննարկմանն անցնելը, հարկ ենք համարում անդրադառնալ դատավորի անկախությանը, դատավորի անկախությունը երաշխավորող հիմնարար դրույթներին, և մատնանշված հիմնահարցերը ներկայացնել դատավորի անկախության ապահովման համատեքստում:

Այսպես, դատավորի անկախությունը, լինելով դատավորի սահմանադրաիրավական կարգավիճակի բաղկացուցիչ տարր, կոչված է ապահովելու դատական իշխանության ինքնուրույնությունը. այն հանրային շահերի, այդ թվում՝ արդարադատության շահի պաշտպանության կարևորագույն նախապայման է¹:

Սակայն անհրաժեշտ ենք համարում ընդգծել, որ դատարանի անկախության սկզբունքի լիարժեք կենսագործման համար անհրաժեշտ է այդ սկզբունքի իրականացման համար ազգային օրենսդրության մեջ սահմանել իրական երաշխիքներ: Հակառակ դեպքում դատարանի անկախության սկզբունքը կվերածվի ձևական իրողության և այդպես էլ կյանքի չի կոչվի²:

Հարկ է նշել, որ դատավորների անկախությունը երաշխավորող հիմնարար դրույթներն իրենց ամրագրումն են ստացել ինչպես ՀՀ Սահմանադրությունում³ և ՀՀ

¹Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի 2011 թվականի հոկտեմբերի 20-ի թիվ ԳԴ5/0022/01/10 որոշումը, կետ 34:

²Տե՛ս Դատավորի ձեռնարկ, գիտագործնական վերլուծություն, /հեղ. խումբ/ Երևան, Ասողիկ, 2010թ., էջ 22:

³Տե՛ս ՀՀ Սահմանադրության 164-րդ հոդվածի 1-ին մասը:

օրենսդրական այլ ակտերում⁴, այնպես էլ միջազգային մի շարք փաստաթղթերում: Դրանց շարքից կարելի է հատկապես առանձնացնել «Դատավորների կարգավիճակի մասին» 1998 թվականի հուլիսի 10-ի եվրոպական խարտիան և եվրոպական խարտիայի պարզաբանման հուշագիրը, ՄԱԿ-ի գլխավոր վեհաժողովի կողմից 1985 թվականի նոյեմբերի 29-ի թիվ 40/32 և 1985 թվականի դեկտեմբերի 13-ի թիվ 40/46 բանաձևերով հաստատված «Դատական մարմինների անկախության հիմնարար սկզբունքները» և դրա հավելվածը՝ ՄԱԿ-ի գլխավոր վեհաժողովի կողմից թիվ 2200A(XXI) բանաձևով հաստատված «Դատավորների վարքագծի բանգալորյան սկզբունքները», Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի 1994 թվականի հոկտեմբերի 13-ի «Դատավորների անկախության, արդյունավետության ու դերի մասին» թիվ R(94)12 և 2010 թվականի նոյեմբերի 17-ի «Դատավորների անկախության, գործունեության արդյունավետության և պատասխանատվության մասին» թիվ CM/Rec(2010)12 հանձնարարականները, ԵԱՀԿ/ԺՄԻԳԻ և Դատական անկախության հետազոտությունների Մաքս Պլանք Միներվա խմբի՝ 2010 թվականի հունիսի 23-25-ի «Արևելյան եվրոպայում, Հարավային կովկասում, Կենտրոնական Ասիայում դատական անկախության վերաբերյալ կիևյան հանձնարարականները»:

Դատավորների անկախության վերաբերյալ մի շարք իրավական դիրքորոշումներ են արտահայտել նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ Եվրոպական դատարան)⁵ և ՀՀ վճռաբեկ դատարանը⁶: Այդ մասին կարծիք է ներկայացրել Եվրոպայի խորհրդի համակարգում գործող եվրոպական դատավորների խորհրդատվական խորհուրդը⁷, ինչպես նաև

⁴Տե՛ս «ՀՀ դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 7-րդ հոդվածը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 40-րդ հոդվածը:

⁵Տե՛ս, օրինակ, Եվրոպական դատարանի՝ **Քեմբլը և Ֆելն ընդդեմ Միացյալ Թագավորության** (Campbell and Fell v The United Kingdom) գործով 1984 թվականի հունիսի 28-ի վճիռը, գանգատներ թիվ 7819/77, 7878/77, կետեր 76-82:

⁶Տե՛ս, օրինակ, ՀՀ վճռաբեկ դատարանի 2011 թվականի հոկտեմբերի 20-ի թիվ ԳԴ5/0022/01/10 որոշումը:

⁷Տե՛ս Եվրոպական դատավորների խորհրդատվական խորհուրդ, կարծիք թիվ 1(2001), 2001թ., նոյեմբերի 23, կետ 10:

«Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովը (Վենետիկի հանձնաժողով)⁸:

Վերոգրյալ իրավանորմերի, իրավական դիրքորոշումների և կարծիքների համակարգային վերլուծության արդյունքում կարելի է եզրահանգել, որ դատավորի անկախությունը ցանկացած իրավական պետության նախադրյալն ու արդարացի դատի հիմնական երաշխիքն է, ինչը նշանակում է, որ ոչ ոք չի կարող միջամտել դատավորի գործունեությանը, ազդեցության ունենալ նրա մտածողության ու նրա կողմից կայացվող որոշման վրա:

Անկախ դատական իշխանության առկայությունը ենթադրում է, որ դատարանները պետք է գործեն արտաքին ներգործությունը և ճնշումները բացառող նորմատիվ և ինստիտուցիոնալ երաշխիքների պայմաններում ու օրենքով իրենց տրված լիազորությունների հիման վրա⁹:

Այսպիսով, կարելի է ասել, որ դատական անկախությունը չի ենթադրում դատավորին արտոնության կամ առաջնության տրամադրում, այլ, ընդհակառակը, այն յուրաքանչյուր դատավորի մոտ առաջացնում է պատասխանատվության բարձր զգացում, ինչը և հնարավորություն է տալիս նրան գործը լուծել արդարացի և անկողմնակալ, առանց արտաքին ճնշման կամ ազդեցության և առանց կողմնակի միջամտության:

Այնուամենայնիվ, հարկ է նշել, որ դատավորների անկախության պաշտպանության և պահպանության շրջանակներում առկա է նաև նրանց պատասխանատվության ենթարկման պայմանների և եղանակների հետ կապված խնդիրը, քանի որ դեմոկրատական հասարակության մեջ դատավորը չի կարող օժտված լինել բացարձակ իմունիտետով, բայց միևնույն ժամանակ պատասխանատվության ենթարկումը անհրաժեշտ է այնպես իրականացնել, որ դատավորների անկախությունն ու ազատությունն ապահովվեն ցանկացած տեսակի ճնշումներից: Չպետք է թույլ տալ, որ պատասխանատվության ենթարկումը հանգեցնի դատավորի անկախության փլուզմանը:

⁸«Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովի՝ 2010 թվականի մարտի 16-ի թիվ CDL-AD (2010)004 զեկույցը:

⁹Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի 2011 թվականի հոկտեմբերի 20-ի թիվ ԳԴ5/0022/01/10 որոշումը, կետ 34:

1-ին հիմնահարց

Ինչպես հայտնի է, ՀՀ Սահմանադրությամբ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու իրավասությամբ օժտված է ՀՀ բարձրագույն դատական խորհուրդը (այսուհետ՝ նաև ԲԴԽ):

Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերը հստակ և սպառիչ կերպով ամրագրվել են <<<< դատական օրենսգիրք>> ՀՀ սահմանադրական օրենքի 142-րդ հոդվածի 1-րդ մասում, որի 1-ին կետի համաձայն՝ որպես այդպիսի հիմք է համարվում նաև արդարադատություն կամ որպես դատարան՝ օրենքով նախատեսված այլ լիազորություններ իրականացնելիս նյութական կամ դատավարական իրավունքի նորմի ակնհայտ և կոպիտ խախտումը:

Նկատենք, որ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու համապատասխան հիմքի որոշ տարրերը, ի տարբերություն ՀՀ դատական նախկին օրենսգրքի 153-րդ հոդվածի (1-ին մասի 1-2-րդ կետեր), այլ ձևակերպում են ստացել «ՀՀ դատական օրենսգիրքե ՀՀ սահմանադրական օրենքում: Մասնավորապես, այդ հիմքը սահմանադրական օրենքի 142-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում ձևակերպվել է հետևյալ կերպ. «արդարադատություն կամ որպես դատարան՝ օրենքով նախատեսված այլ լիազորություններ իրականացնելիս նյութական կամ դատավարական իրավունքի նորմի ակնհայտ և կոպիտ խախտումը: Դրանից հետևում է, որ ի տարբերություն ՀՀ դատական նախկին օրենսգրքի՝ սահմանադրական օրենքում նախ՝ լրացվել է «կամ որպես դատարան՝ օրենքով նախատեսված այլ լիազորություններ իրականացնելիս բառակապակցությունը, ինչը, մեր կարծիքով, իրավաչափ է, քանի որ դատարանն իրականացնում է ոչ միայն արդարադատություն, այլև, օրինակ, դատական վերահսկողություն է իրականացնում մինչդատական վարույթի նկատմամբ: Թեև ասվածին՝ միաժամանակ փաստենք, որ ՔԴՕ 426.4-րդ հոդվածի 1-ին մասի 2.1-րդ կետում կատարված փոփոխությունների արդյունքում «կամ որպես դատարան՝ օրենքով նախատեսված այլ լիազորություններ իրականացնելիս բառակապակցությունը պարզ չէ, թե ինչու, սակայն ամեն դեպքում չի նախատեսվել: Վերոշարադրյալի հետ մեկտեղ նկատենք նաև, որ սահմանադրական օրենքում խնդրո առարկա հիմքի տարրերից դուրս է բերվել «որը

կատարվել է չարամտորեն կամ կոպիտ անփութությամբ ձևակերպումը:

ՀՀ դատական օրենսգրքի 144-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը վկայում է, որ վերը քննարկվող հիմքով դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու նպատակով վարույթ կարող է հարուցվել խախտումը հայտնաբերելուց հետո վեց ամսվա ժամկետում: Եթե խախտումը հայտնաբերվել է մինչև դատական վարույթն ավարտվելը, ապա վեցամսյա ժամկետը հաշվարկվում է դատական վարույթն ավարտվելու պահից:

Հիշյալ նորմերի վերլուծությունից հետևում է, որ Բարձրագույն դատական խորհուրդը իրավասու է դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարց քննարկել և հաստատել նյութական կամ դատավարական օրենքի նորմի խախտման փաստը նաև այն դեպքերում, երբ տվյալ գործով կամ հարցով համապատասխան դատական ակտը՝

1) մտել է օրինական ուժի մեջ, և բողոքի բացակայության պատճառով խախտման փաստը չի քննվել վերադաս դատարանի կողմից,

2) չի մտել օրինական ուժի մեջ, խախտման փաստը քննվել է վերադաս ատյանի կողմից, սակայն դատարանը խախտում չի հայտնաբերել և համապատասխան ակտը թողել է օրինական ուժի մեջ:

Հարկ ենք համարում նշել, որ չնայած սահմանադրական և օրենսդրական այն դրույթներին, որ դատական ակտի օրինականության ստուգումը կարող է իրականացվել բացառապես վերադաս դատական ատյանի կողմից՝ փաստորեն ստացվում է, որ բարձրագույն դատական խորհուրդը, դատական իշխանության համակարգում հանդես գալով որպես ինքնուրույն և անկախ մարմին, տալիս է գնահատականներ դատական ակտի օրինականության վերաբերյալ:

Ակներև է, որ ԲԴԽ-ի այս գործառույթը խնդրահարույց է դատավորների անկախության բովանդակությունը կազմող հիմնարար գաղափարների, այդ թվում՝ վերջիններիս կողմից քրեական գործերը և նյութերը ազատ, իրենց ներքին համոզմունքների հիման վրա լուծելու ելակետային դրույթների տեսանկյունից:

«Նյութական և դատավարական օրենքի խախտումները կարող են բողոքարկման կամ դատական ակտի վերանայման և ոչ թե դատավորի կարգապահական պատասխանատվության հիմք հանդիսանալ: Այլապես, եթե

որոշում է կայացվում, որ դատավորը նյութական կամ դատավարական օրենքի «ակնհայտ և կոպիտ խախտում» է թույլ տվել, ապա Արդարադատության խորհուրդը փոխարինում է փաստերի գնահատման և մասնավոր դեպքում օրենքի կիրառման վերաբերյալ դատավորի կարծիքը իր սեփական կարծիքով», -նշվում է իրավական աղբյուրներում¹⁰:

Անընդունելի կլինեի համաձայնել այն մտքին, որ Սահմանադրության 175-րդ հոդվածի, «ՀՀ դատական օրենսգիրքի ՀՀ սահմանադրական օրենքի 2-րդ մասերում ամրագրված այն նորմը, համաձայն որի՝ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցերը քննելիս Բարձրագույն դատական խորհուրդը գործում է որպես դատարան, վերջինիս վերածում է արդարադատություն իրականացնող մարմնի: Մեր համոզմամբ միանշանակ է այն, որ այդ դրույթի ամրագրումը բացառապես ուղղված է ԲԴԽ-ի՝ սահմանադրորեն կանխորոշված գործառույթների իրականացման ապահովմանը, ուստի դրա հակառակ մեկնաբանությունը չի կարելի հիմնավոր համարել:

Ասվածի մասին է անմիջականորեն վկայում նաև թեև նախկին, սակայն գործող իրավանորմերի համեմատությամբ նույնաբովանդակ իրավահարաբերությունների առնչությամբ ՀՀ սահմանադրական դատարանի արտահայտած այն դիրքորոշումը, որ «գործում է որպես դատարանե եզրույթի առնչությամբ նկատի պետք է ունենալ հիշյալ մարմնի գործունեության կարգը, այլ ոչ թե նրա՝ որպես արդարադատություն իրականացնող դատարանի գործառնական դերը¹¹:

Այն, որ Բարձրագույն դատական խորհրդի այդպիսի իրավասությունները խնդրահարույց են դատավորների անկախության տեսանկյունից, վկայում են նաև միջազգային փորձի առանձին վերլուծությունները:

«Կենտրոնական դատական խորհուրդը¹² հանդիսանում է անկախ սահմանադրական մարմին ...՝ բաղկացած դատավորներից և այլ իրավագետներից,

¹⁰Տե՛ս Առաջարկությունների փաթեթ՝ «Ինստիտուցիոնալ բարեփոխումների նպատակով տեխնիկական աջակցության և խորհրդատվական ծառայությունների մատուցում Արդարադատության խորհրդին և Դատական դեպարտամենտին», 2010թ.,մայիս, էջ 53:

¹¹Տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2012 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ ՍԴՈ-1063 որոշումը, կետ 6:

¹²Նշենք, որ օտարերկրյա տարբեր երկրներում արդարադատության խորհուրդն ունի տարբեր անվանումներ՝ Մագիստրատուրայի բարձրագույն խորհուրդ (Ֆրանսիա, Իտալիա, Մոլդովա), Դատական խորհուրդ (Շվեդիա, Իռլանդիա, Դանիա), Կենտրոնական դատական խորհուրդ (Իսպանիա), Բարձրագույն դատական խորհուրդ (Չեխիա), Պետական դատական խորհուրդ

ում ... գործառույթների իրականացումը նպատակաուղղված է դատավորների անկախության ապահովմանը ... :

...Դատական անկախության պաշտպանությունը չի ավարտվում միայն այնպիսի միջոցառումների իրականացմամբ, ինչպիսին այդ անկախության նկատմամբ խորհրդի կողմից ընդգծված հարգալից վերաբերմունք դրսևորելու պարտականությունն է, այլ խորհուրդը պետք է զերծ մնա ցանկացած տեսակի այնպիսի ցուցում, հրահանգ, հրաման կամ կարգադրություն դատավորներին կամ դատարաններին տալուց, թե ինչպես պետք է մեկնաբանել և կիրառել օրենքը»,- նշվում է Իսպանիայի Թագավորության կենտրոնական դատական խորհրդի կարգավիճակի և լիազորությունների մեկնաբանության շրջանակներում¹³:

Ֆրանսիայի Հանրապետության դատական օրենսգրքի 259.15-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի¹⁴ վերաբերյալ խորհրդատվության և հետազոտությունների համար հանձնաժողովի կողմից հաստատված համապատասխան զեկույցում նշվել է. «Դատական համակարգի անդամների ... անկախության ապահովման նպատակով Բարձրագույն խորհուրդը չի կարող քննել այն բողոքները, որոնք վերաբերում են դատական որոշման բովանդակությանը: «Դատական որոշումը» եզրույթը լայն է մեկնաբանվում, և այն իր մեջ ներառում է ոչ միայն դատավորի կողմից կայացված վճիռները, դատավճիռները, այլև դատական ընթացակարգերի շրջանակներում կայացված ցանկացած դատական որոշումը¹⁵»:

Նույն իրավահարաբերությունները սահմանված են նաև Բելգիայի Թագավորության համապատասխան նորմատիվ իրավական ակտերում¹⁶:

«Կարգապահական վարույթի և Վրաստանի ընդհանուր դատարանների դատավորների կարգապահական պատասխանատվության մասին» Վրաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի ուսումնասիրությունից հետևում է, որ մինչ

(Խորվաթիա) և այլն (տե՛ս **Voermans W., Albers P.**, Councils for the judiciary in EU countries, European Commission for the Efficiency of Justice (CEPEJ), February, 2003), http://www.coe.int/t/dghl/cooperation/cepej/textes/CouncilOfJusticeEurope_en.pdf:

¹³ http://www.poderjudicial.es/cgpj/es/Poder_Judicial/Consejo_General_del_Poder_Judicial/Informacion_Institucional/Que_es_el_CGPJ/Mision

14Stu' uhttp://www.ejustice.just.fgov.be/cgi_loi/change_lg.pl?language=fr&la=F&table_name=loi&cn=1967101
002

¹⁵Stu http://www.csi.be/sites/5023.b.fedimbo.belgium.be/files/press_publications/rappplaintes-2013-fr.pdf,

٤٣ ٣:

¹⁶añã»ë â³ñ¹¹⁄²³µ³ÝáõÛª ï»°ë <http://www.csi.be/fr/content/faq-plaintes>:

2010»²⁰ «ë ØÐ ë³NUY³¹n³¹Y¹ i¹³n³YÇ^a 2010 Āi¹³YÇ¹ 'lī»Ù»nÇ 14Ç ĀĆi 28 áñáBáõÚÁ, İ»i 7.4 (http://www.constcourt.md/public/files/file/Actele%20Curtii/acte_2010/h_28.pdf):

կայացրած անօրինական դատական ակտի բեկանման (փոփոխման) և այն փաստի հաստատման դեպքում, որ դատավորը թույլ է տվել նյութական կամ դատավարական օրենքի նորմի խախտում:

Այսինքն՝ այն դեպքում, երբ վերադաս ատյանը նյութական կամ դատավարական օրենքի նորմի խախտում է արձանագրել, մեր կարծիքով, ինչ-որ տեղ հնարավոր է դառնում ԲԴԽ-ի կողմից դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկումը, քանի որ այդ ժամանակ ոչ թե ԲԴԽ-ն, այլ դատարանն է արձանագրում խախտման փաստը, իսկ ԲԴԽ-ն արդեն իսկ առաջնորդվում է դրանով և գնահատելով խախտման կոպիտ և ակնհայտ լինելու աստիճանը՝ լուծում է դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը:

2-րդ հիմնահարց

Վերոշարադրյալի համատեքստում այժմ ցանկանում ենք անդրադառնալ <<<< դատական օրենսգիրք>> սահմանադրական օրենքի 142-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի՝ << քրեական դատավարության օրենսգրքում տեղ գտած իրավական հետևանքներին:

Օրենսգրքի 426.4-րդ հոդվածի 1-ին մասի 2.1.-րդ կետը 2018 թվականի օրենսդրական փոփոխությունների արդյունքում շարադրվեց հետևյալ խմբագրությամբ. «1.Նոր հանգամանքների հետևանքով դատական ակտերը վերանայվում են հետևյալ դեպքերում.

2.1) Բարձրագույն դատական խորհուրդն ընդունել է որոշում, որով տվյալ դատական ակտը կայացրած դատավորը ենթարկվել է կարգապահական պատասխանատվության՝ տվյալ գործով արդարադատություն իրականացնելիս նյութական կամ դատավարական նորմի ակնհայտ և կոպիտ խախտման համար. ե:

Նախ՝ փաստենք, որ թեև <<<< դատական օրենսգիրք>> սահմանադրական օրենքում լրացվել է «կամ որպես դատարան՝ օրենքով նախատեսված այլ լիազորություններ իրականացնելիս» բառակապակցությունը, այնուամենայնիվ,

սակայն այն շարունակում է մնալ օրինական ուժի մեջ) ինչ-որ տեղ ընդունելի են թվում վերոգրյալ դատողությունները, այնուամենայնիվ, համակարգային առումով չենք կարող համաձայնվել վերը արտահայտված կարծիքին՝ հաշվի առնելով ստորև բերվող պատճառաբանությունները:

Այսպես, նախ նշենք, որ Բարձրագույն դատական խորհրդի որոշումը որպես նոր հանգամանքի հիմք նախատեսելը առաջին հերթին, ըստ մեզ, չի համապատասխանում ԲԴԽ-ի սահմանադրաիրավական կարգավիճակին, ըստ որի՝ վերջինիս հիմնական առաքելությունը դատարանների և դատավորների անկախության երաշխավորումն է²²:

Նման պայմաններում փաստորեն ստացվում է, որ Բարձրագույն դատական խորհուրդը, վերածվելով արդարադատություն իրականացնող մարմնի, փաստացի հանդես է գալիս որպես «չորրորդ ատյան», ինչը դժվար թե կարող է ընդունելի համարվել:

Օրենսդիրը ԲԴԽ-ի որոշմանը հաղորդել է այնպիսի իրավական ուժ, ինչի արդյունքում հնարավոր է դառնում վերանայելու նույնիսկ նախադեպային իրավունք ձևավորող ՀՀ բարձրագույն դատական ատյանի՝ ՀՀ վճռաբեկ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը:

Կարծում ենք, որ դատական ակտի՝ օրինական ուժի մեջ մտնելու պահից վերջնական դառնալու, և դրա՝ միայն բացառիկ դեպքերում վերանայման հնարավորության, այսինքն՝ դատական ակտերի կայունության սկզբունքի²³ տեսանկյունից նույնպես արդարացված չէ դատավորների անկախությունը երաշխավորող մարմնի՝ ԲԴԽ-ի որոշումը դիտարկել որպես նոր հանգամանք, այսինքն՝ այդպիսի որոշումը համարել էական և անհետաձգելի հանգամանք ու շեղվել դատական ակտերի կայունության սկզբունքից:

Բացի այդ, ըստ մեզ՝ ճիշտ չէ նաև Բարձրագույն դատական խորհրդի որոշումը դիտարկել նույն շարքում՝ նոր հանգամանքներով բացառիկ վերանայման հիմքեր հանդիսացող այնպիսի մարմինների իրավական ակտերի կողքին, ինչպիսիք են՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը և ՀՀ սահմանադրական

²²»°ē ÐÐ ê³ÑÛ³Ý³¹ñáõÃÛ³Ý 173-ñ¹ Ñá¹³ÍÁ:

դատարանը, քանի որ հակառակ պարագայում նույնանում են այդ մարմինների կայացրած ակտերի իրավական արժեքը, դերը և նշանակությունը:

Ավելին, բացառված չէ այնպիսի իրավիճակ, երբ ԲԴԽ-ի որոշումը չհամապատասխանի Եվրոպական դատարանի, Սահմանադրական կամ ՀՀ վճռաբեկ դատարանների արտահայտած իրավական դիրքորոշումներին, իսկ այդ պարագայում փաստորեն կստացվի, որ օրինական ուժի մեջ մտած դատական ակտը (այդ թվում՝ ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումը) կարող է վերանայվել ԲԴԽ-ի՝ նշված դատարանների արտահայտած իրավական դիրքորոշումներին հակասող որոշման հիման վրա: Ասվածը վկայում է, որ համապատասխան դեպքերում, ըստ էության, կարող է խաթարվել նաև դատական համակարգի բնականոն գործունեությունը:

Վերոգրյալ վերլուծությունների լույսի ներքո կարծում ենք, որ Բարձրագույն դատական խորհրդի որոշման հիման վրա օրինական ուժի մեջ մտած դատական ակտը վերանայելը չի կարող համարվել արդյունավետ իրավական մեխանիզմ, այլ կերպ՝ կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին ԲԴԽ-ի որոշումները քրեադատավարական հարաբերությունների ոլորտ տեղափոխելը բավականաչափ խնդրահարույց է:

Այդ է վկայում նաև օտարերկրյա մի շարք պետությունների (օրինակ՝ Ֆրանսիա, Բելգիա, Լիտվա, Վրաստան, Մոլդովա և այլն) քրեադատավարական օրենսդրությունների ուսումնասիրությունը:

Վերոգրյալի համատեքստում հարկ ենք համարում նշել նաև, որ այն դեպքում, երբ դատավորի կողմից թույլ տրված նյութական կամ դատավարական նորմի ակնհայտ և կոպիտ խախտումն իր մեջ պարունակի հանցագործության հատկանիշներ, ապա օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը կարող են վերանայվել ՔԴՕ 426.3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիմքով: Ընդ որում, փաստենք նաև, որ այդ տեսանկյունից, մեր կարծիքով, բովանդակային առումով որևէ նշանակություն չունի այն, որ ի տարբերություն նախկին օրենսդրական կարգավորումների՝ «ՀՀ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում, ինչպես նաև Գործող օրենսգրքում դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու համապատասխան հիմքի տարր կազմող «որը

կատարվել է չարամտորեն կամ կոպիտ անփութությամբ» ձևակերպումը այլևս չի նախատեսվել:

Այսպիսով, հաշվի առնելով կատարված ուսումնասիրությունները՝ կարծում ենք, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.4-րդ հոդվածի 1-ին մասի 2.1-րդ կետը պետք է ուժը կորցրած ճանաչել:

Նկատենք նաև, որ նոր հանգամանքով բացառիկ վերանայման քննարկվող հիմքը Նախագծում նախատեսված չէ:

3-րդ հիմնահարց

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճռի հիման վրա դատավորին նյութական պատասխանատվության ենթարկելը (Վենետիկի հանձնաժողովի դիրքորոշումները)

Փաստենք, որ բարձրացված հիմնահարցը խնդրո առարկա է դարձել մի շարք միջազգային փաստաթղթերում, որոնցից հատկապես ուշագրավ է <<Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով>> եվրոպական հանձնաժողովի (Վենետիկի հանձնաժողովի) կարծիքը:

Այսպես, Վենետիկի հանձնաժողովը նշել է, որ Եվրոպական դատարանի վճիռը ինքնին չի կարող հիմք հանդիսանալ դատավորին նյութական կամ այլ տեսակի պատասխանատվության ենթարկելու համար: Մասնավորապես, ըստ Վենետիկի հանձնաժողովի՝ Եվրոպական դատարանն արձանագրում է միայն պատասխանող պետության պատասխանատվությունը: Եվրոպական դատարանի խնդիրը չէ դատավորի մեղքի, պատասխանատվության հարցի լուծումը: Նույնիսկ այն դեպքում, երբ դատարանը բավարարում է դիմումատուի գանգատը, արձանագրում է կոնվենցիոն իրավունքի խախտում, դա չի կարող ինքնին ենթադրել դատավորի մեղավորության աստիճանի հաստատում: Եվրոպական դատարանի կողմից դատական սխալի արձանագրման իմաստը չի արտահայտվում նրանում, որ դատավորը ենթարկվի քաղաքացիական, քրեական կամ կարգապահական պատասխանատվության: Այդ հարցը պետք է ներպետական մակարդակով առանձին վարույթով դատական քննության առարկա դառնա:

Ըստ Վենետիկի հանձնաժողովի՝ շատ դեպքերում Եվրոպական դատարանի կողմից խախտման արձանագրման փաստը պայմանավորված է լինում ներպետական օրենսդրության թերի կարգավորումների և արտադատական այլ գործոնների (օրինակ՝ դատավարության երկար տևելը, որը կարող է ավելի խորքային պատճառներ ունենա) հետ: Բացի այդ, Վենետիկի հանձնաժողովը նշում է, որ Եվրոպական դատարանը Կոնվենցիան դիտարկում է որպես կենդանի մեխանիզմ, այսինքն՝ հասարակական հարաբերությունների զարգացմանը զուգընթաց կարող են փոփոխության ենթարկվել նաև նախկինում ձևավորված դիրքորոշումները: Իսկ այդ պայմաններում Եվրոպական դատարանի վճիռը ինքնին հիմք դարձնել դատավորին նյութական պատասխանատվության ենթարկելու համար, ըստ հանձնաժողովի, իրենում վտանգներ է պարունակում:

Ավելին, հանձնաժողովը նշում է նաև, որ դատավորները պետք է օժտված լինեն անսահմանափակ ազատությամբ փաստերի և ապացույցների՝ օրենքին համապատասխան և ներքին համոզմամբ գնահատելու հարցում: Իսկ նյութական պատասխանատվության հարց բարձրացնելու դեպքում դատավորը կսկսի գործել հնարավոր պատժի սպառնալիքի ներքո, ինչը կարող է ազդել նրա կողմից հետագայում կայացվող որոշման արդարացիության վրա: Բացի այդ, դատավորները կձգտեն պաշտպանել մասնավոր շահը, օրենքը կիրառել ի օգուտ մասնավոր շահի՝ հետագա պատասխանատվությունից խուսափելու համար, իսկ արդյունքում կվտանգվի մասնավոր և հանրային շահերի հավասարակշռված պատշտպանության անհրաժեշտությունը:

